Կարեն Հ. Խանլարյան (Թեհրան)
Տեխնիկակ. գիտ. դոկտոր

«ԱԴՐԲԵՋԱՆ» ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Օսմանյան քարտեզներում, հանրագիտարանային նշանակության հրատարակություններում և դասագրքերում*

Մուտք

Պատմական փաստերը վկայում են, որ 1918 թ. մայիսին ստեղծված «Ադրբեջան» անունով պետության անվանակոչման հարցում վճռական դեր են ունեցել օսմանյան Թուրքիայի իթթիհատական իշխանությունները: Հենց նրանց թելադրանքով և անցյալում «Ալբանիա», «Շիրվան» կամ «Շերվան» կոչվող տարածքների անվանախեղմամբ՝ «Մուսավաթ» կուսակցությունն այս նորագոյացությունն անվանեց «Ադրբեջան»: Իթթիհատականներն ու մուսավաթականները թերևս ձգտում էին իրավաքաղաքական պարարտ հող նախապատրաստել հետագայում Իրանի Ատրպատական նահանգը նոր պետությանը կցելու համար:

Շուրջ երկու տարի անց՝ 1920 թ. ապրիլին, խորհրդային Կարմիր բանակի ռազմական նվաճումների արդյունքում «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետություն» ամբողջական անունը կրող այդ պետությունը կորցրեց իր անկախությունը: Ձևավորվեց «Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը» (ԱՍԽՀ), և նրա կազմում ի հայտ եկան «Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունն» ու «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը»:

Հակառակ վրացական և հայկական «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների», որոնք համարվում էին ազգերի ինքնորոշման իրավունքի «լենինյան սկզբունքի» պետական դրսևորումներ, «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունն» ի սկզբանե դիտվում էր իբրև «ինտերնացիոնալիստական» պետություն: Նման պետական բնորդի որդեգրումը մտածել է տալիս, որ խորհրդային ղեկավարները սկզբում միգուցե գիտակցում էին, որ կովկասյան թաթարներին

* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.11.2012:

«ադրբեջանական ազգ» կամ «ժողովուրդ» անվանելը կոպիտ սխալ կարող է համարվել, որովհետև այն ենթադրում էր պատմաաշխարհագրական խեղաթյուրումներ: Այնուամենայնիվ «ինտերնացիոնալիստական» հանրապետության անվան մեջ «ադրբեջանական» եզրի պահպանումը ևս պատմաիրավական հնարավորություն էր տալիս Խորհրդային Միությանն Իրանի Ատրպատականն օկուպացնելու և իր տարածքային կազմին կցելու համար: Ի դեպ, Երկրորդ աշխարհամարտի ընթացքին թեև նման մի հնարավորություն ձեռք բերվեց, սակայն չհաջողվեց իրացնել:

«Ինտերնացիոնալիստական» բնույթի պետական բնորդի կիրառումն ԱԽՍՀ-ի պարագայում մտածել է տալիս, թե ինչու 1991-ին վերանկախացած «Ադրբեջանի» իշխանությունները, ի թիվս այլ հիմնավորումների, հրաժարվեցին և մինչ օրս համառորեն շարունակում են հրաժարվել ԱԽՍՀ-ի իրավահաջորդությունից, քանզի ներկայումս նրանք պնդում են, թե իբր «Ադրբեջանը» զուտ էթնիկական հիմքի վրա ստեղծված «ազգային» պետություն է:

Արդ հարց է առաջանում՝ արդյո՞ք Արաքսից հյուսիս երբևէ գոյություն է ունեցել «Ադրբեջան» անունով պատմական տարածք: Եվ արդյո՞ք պատմական առումով նման կատեգորիկ թյուրիմացությունը որևէ առնչություն ունի Իրանի Ադրբեջան, Ատրպատական կամ Ատրոպատենե տարածքի հետ:

Այս կապացությամբ ծավալվող քննարկումներում Բաքվի պանթուրքիստ պատմաբանների մոտ օրինաչափ ավանդույթ է ձևավորվել, որի հիման վրա նրանք հարցականի տակ են առնում և համառորեն մերժում են իրանական, ռուսական, եվրոպական և հատկապես հայկական սկզբնաղբյուրների հավաստիությունը՝ դրանք համարելով միակողմանի և կեղծ:

Ներկայացվող ուսումնասիրության նպատակն է օսմանյան քարտեզների, հանրագիտարանային նշանակության փաստաթղթերի և դասագրքերի միջից վեր հանել «Ադրբեջան» հասկացությունը: Սրանով ընթերցողների ու հետազոտողների դատին ենք հանձնում Բաքվի պանթուրքիստ պատմաբանների չափանիշներով՝ «ոչ միտումնավոր» և «անկողմնակալ» օսմանյան փաստարկները:

1.Օսմանյան քարտեզները

Օսմանյան քարտեզագրության նախահայրերից է Փիրի Ռեյիսը, բուն անունով՝ Հաջի Մեհյեդին Բեն Հաջի Մեհմեդ: Նա ծնվել է 1465-1470 թթ. միջև ընկած ժամանակահատվածում և մահացել 1554 կամ 1555 թ.: Փիրի Ռեյիսը՝ որպես Օսմանյան կայսրության ծովակալ, եղել է ծովային քարտեզների պատրաստման և մշակման ընդհանուր պատասխանատուն: Նրա մշակած քարտեզները հավաքագրվել են «Ծովագիրք» (Քիթաբ-ի-բահրիյե / کتاب بحریه) անունով հավաքածուում[1]: Այն կազմվել է 1513 թ. Ստամբուլում և 1929 թ. հայտնաբերվել է Թոփգափու պալատի

1 Տես fa.wikipedia.org/wiki/

մատենադարանից[2]: Վերջերս հավաքածուն ամբողջապես թվայնացվել է «Վալցերի» անվան գեղարվեստի թանգարանի (The Walters Art Museum) միջոցներով[3]: «Քիթաբ-ի-բահրիյե»-ում, ի թիվս Փիրի Ռեյիսի մշակումների, առկա է նաև Կասպից ծովը (Բահր-ի-Խազեր / بحر خزر) և մերձափնյա որոշ տարածքներն ընդգրկող ծովային քարտեզը[4] (տե՛ս Նկար 1):

Նկար 1. Կասպից ծովի ծովաքարտեզը Փիրի Ռեյիսի «Ծովագիրք» հավաքածուից

Այս քարտեզում իրանական «Գիլան երկրամասի» (Մեմլեքեթ-ի-Գիլան / ممالک گیلان) հարևանությամբ Կասպից ծովի հարավարևմտյան տարածքը (տե՛ս Նկար 2) անվանվել է «Շերվան երկրամաս» (Մեմլեքեթ-ի-Շերվան / ممالک شروان), որի կազմի մեջ նշվել են Բագու (باکو) և Շամախի (شماخی) քաղաքների անունները: Սույն քաղաքների մերձակայքում ոչ մի նշույլ անգամ չկա «Ադրբեջանից»:



Նկար 2. Կասպից ծովի հարավարևմտյան տարածքը՝ ըստ Փիրի Ռեյիսի «Ծովագիրք» հավաքածուի

2 Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Piri_Reis
3 Տե՛ս www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts
4 Տե՛ս www.thedigitalwalters.org/Data/WaltersManuscripts/W658/data/W658/sap/W658_000758_sap.jpg

Օսմանյան նշանավոր քարտեզագիրներից է նաև Քյաթիբ Չելեբին: Բուն անունով՝ Մուստաֆա Հաջի Խալիֆե քարտեզագիրը ծնվել է 1638 թ. Ստամբուլում և մահացել 1688 թ.: Երիտասարդ տարիքում զինվորագրվել է օսմանյան բանակին, 13 տարի շարունակ ներկա է եղել արևելյան տարբեր ռազմաճակատներում՝ Իրանի դեմ պատերազմին, Համադան քաղաքի գրոհին, Բաղդադի պաշարմանը և այլն[5]: Քյաթիբ Չելեբիի մշակումներից մեկը Սեֆյան Իրանի վարչատարածքային քարտեզն է (տես Նկար 3):



Նկար 3. Սեֆյան Իրանի վարչատարածքային քարտեզը, հեղինակ՝ Քյաթիբ Չելեբի

Սույն քարտեզում, Իրանի հյուսիսարևմտյան հատվածում (տես Նկար 4), Ադրբեջան երկրամասը նշվել է «Մեմլեքեթ-ի-Ազերբեյջան» (ممالك ازربيجان) անունով՝ Արաքս գետի (Նահր-ի-Արաս / نهر ارس) հարավում, որի տարածքում երևում են նաև Թավրիզ (تبريز), Արդեբիլ (اردبيل), Սուֆյան (صوفيان), Ղարադաղ (պատմական Փայտակարան / قره طاق), Ջուլֆե (պատմական Ջուղա / جولفه), Խոյ (خوى) քաղաքներն ու գավառները և այլն:

Նկար 4. Սեֆյան Իրանի հյուսիսարևմտյան տարածքը, ըստ Քյաթիբ Չելեբիի

5 Տես fa.wikipedia.org/wiki/

Մեր կողմից վկայաբերվող մյուս քարտեզը պատկանում է գրականագետ, հետազոտող և քաղաքական գործիչ Իբրահիմ Մութուֆերեկեին, ով ծնվել է 1674 թ. Տրանսիլվանիայում, հունգարական ընտանիքում: Օսմանյան բանակի կողմից գերեվարվելուց հետո կրոնափոխ դարձած Իբրահիմ Մութուֆերեկեի հունգարական անունը և ազգանունը չի հիշատակվել պատմության մեջ: Նա Օսմանյան կայսրության առաջին արաբատառ տպարանի հիմնադիրն է, ուր հրատարակվել է Քյաթիբ Չելեբիի «Աշխարհացույց» (Ջիհան նամա/جهان نما) աշխարհագրական աշխատությունը: Վախճանվել է 1745 թվականին[6]: Իբրահիմ Մութուֆերեկեի միջոցով մշակված և օսմաներենով հրատարակված հերթական գործերից է «Իրանի երկրամասերը» (Մեմալեք-ի-Իրան / ممالك ايران) վերնագրով քարտեզը, ուր պատկերված է Սեֆյան Իրանը (տես Նկար 5):

Նկար 5. «Իրանի երկրամասերը» վերնագրով քարտեզը, հեղինակ՝ Իբրահիմ Մութուֆերեկե

Սույն քարտեզի մի հատվածում՝ Իրանի հյուսիսարևմտյան տարածքում (տես Նկար 6) Ադրբեջանը («Մեմլեքեթ-ի-Ազերբեյջան») նույնպես նշված է Արաքսի հարավում, իսկ «Մեմլեքեթ-ի-Շերվանը»՝ Արաքսի հյուսիս-արևելյան մասում: Վերջինիս կազմի մեջ երևում են Բաքու և Շամախի քաղաքները: Ուշագրավ կետն այն է, որ քարտեզում նշված են նաև «Երևան

6 Տես fa.wikipedia.org/wiki

նահանգը» (Իյալեթ-ի-Ռևան / ایالت روان), «Ղարաբաղի նահիյե»-ն (Նահիյե-ի-Ղարաբաղի / ناحیه قره باغی) և Նախիջևանը (نخجوان):

Նկար 6. Սեֆյան Իրանի հյուսիսարևմտյան տարածքը՝ Շերվանը, Երևանը, Ղարաբաղը և Նախիջևանը՝ ըստ Իբրահիմ Մութուֆերեկեի

Օսմանյան երկիրը (Էլ-մեմլեքեթ-էլ-Օսմանի) (المملكة العثمانية) վերնագրով օսմանյան պաշտոնական մի քարտեզում, որը մշակվել է արաբերենով և տպագրվել 1893 թվականին Բեյրութում[7] (տես Նկար 7), ներկայիս «Ադրբեջանի Հանրապետության» աշխարհագրական դիրքն անվանվել է «Շիրֆան» (شیروان) (արաբերենում հատուկ անուններում օգտագործվող վ տառը հաճախ փոխարինվում է ֆ-ով): Իսկ «Ազերբեյջանը» (ازربيجان) միանգամայն առանձնացվել է՝ որպես Իրանի (Բելադ-էլ-Աջեմ / بلاد العجم) երկրամաս (տես Նկար 8):

Նկար 7. «Օսմանյան երկիրը» արաբերեն քարտեզը, Բեյրութ, 1893

7 Տես http://ja.wikipedia.org/wiki/%E3%83%95%E3%82%A1%E3%82%A4%E3%83%AB:Osmanli_Ortadogu.jpg

Քարտեզի հատկանշական կետն այն է, որ Ղարաբաղի տարածքը (Քարաբախ/ كراباخ), ակնբախորեն առանձնանցվել է «Շիրֆանից» Կուր (كور) գետի բնական սահմանով:



Նկար 8. Շերվանը, Ադրբեջանը և Ղարաբաղը, ըստ «Օսմանյան երկիրը» արաբերեն քարտեզի

Օսմաներեն ևս մի քարտեզ կա մեր տրամադրության տակ (հավանաբար 19-րդ դարի վերջերին կտավի վրա տպագրված), որը կնքված է «Վիկտոր Ադվիլ» (Victor Advielle) հաստատության կնիքով[8] (տե՛ս Նկար 9):

Նկար 9. Կտավի վրա տպագրված օսմաներեն քարտեզը՝ «Վիկտոր Ադվիլ» հաստատության կնիքով

Սույն քարտեզում, նույնպես, ներկայիս «Ադրբեջանի Հանրապետության» աշխարհագրական դիրքն անվանվել է «Շիրվան» և նրանից Կուր գետի երկայնքով առանձնանցվել է Ղարաբաղի (Ղարեբաղի/ قره باغی) տարածքը (տե՛ս Նկար 10):

8 Տե՛ս http://commons.wikimedia.org/wiki/File:Carte_du_Caucase_en_turc_(19th_century).jpg

Նկար 10. Շերվանը և Ղարաբաղը՝ ըստ «Վիկտոր Ադվիլ» հաստատության կնիքով կնքված քարտեզի

2. Հանրագիտարանային նշանակության հրատարակությունները

Գրականագետ և օսմանյան պաշտոնական պատմաբան Ահմեդ Ռիֆաթ էֆենդիի հեղինակած «Օսմանյան գրանցագիրը» (Սիջիլլի-ի-օսմանի/سجل عثمانی) և «Պատմաաշխարհագրական բառագիրքը» (Լուղաթ-ի-Թարիխիյե-վե-Ջուղրաֆիյե/لغات تاریخیه و جغرافیه) սկզբնաղբյուրային նշանակություն ունեն և դասվում են Օսմանյան կայսրության հանրագիտարանային բնույթի առաջին աշխատությունների շարքին[9]: Ահմեդ Ռիֆաթ էֆենդին, գրական անվամբ՝ Յաղլիկչիզադե, ծնվել է Ստամբուլում 19-րդ դարի առաջին կեսին: Երիտասարդ տարիքից աշխատել է նախ ֆինանսների նախարարությունում, ապա օսմանյան բանակի ծովուժում: Պետական ծառայություններից հիշատակվում է նրա գործունեությունը՝ որպես բարեփոխումների («թանզիմաթ») հանձնաժողովի անդամ: Մահացել է 1895 թվականին:

Ահմեդ Ռիֆաթ էֆենդիի հեղինակած «Պատմաաշխարհագրական բառագիրքի» առաջին հատորը տպագրվել է 1882 թ. Բաբը Ալիում՝ Ստամբուլ (տես Նկար 11):

9 Տես http://www.uslanmam.com/dini-bilgiler/



Նկար 11. Ահմեդ Ռիֆաթ էֆենդիի հեղինակած «Պատմաաշխարհագրական բառագիրք» աշխատության տիտղոսագիրը

Սույն բառագրքի առաջին հատորում Ադրբեջան («Ազերբայջան»/ آزربایجان) բառի դիմաց առկա է հետևյալ բացատրությունը (տես Նկար 12). «Այս տարածքը գտնվում է Իրանի երկրամասերի (Մեմալեք-ի-Իրան) հյուսիս-արևմուտքում, Ռուսաստանի և «դեվլեթ-ի-էլիյե»-ի (իմա՝ Օսմանյան պետություն) հարևանությամբ: Նրա կենտրոնը Թավրիզ քաղաքն է և նշանակալից այլ քաղաքաներն են՝ Խոյը, Սալմաստը, Արդեբիլը, Էջանը և Մարաղան...»[10]:

10 **Ահմետ Ռիֆաթ Էֆենդի,** Պատմաաշխարհագրական բառագիրք, հատ. Ա, Ստամբուլ, 1882, էջ 139: (احمد رفعت افندى، «لغات تاريخيه و جغرافيه»، جلد 1، 1882 ميلادى (1299 هجرى قمرى)، استانبول، صفحه 139)



— ۱۳۹ —

« آزربایجان » — ایران ممالکنك غرب شمالیسنده وروسیه
ودولت علیه حدودی اوزرنده بر قطعهٔ جسیمه‌در . ومرکز اداره‌سی
(تبریز) شهری اولوب (خوی) و (سلماس) و (اردبیل) و (عجبان)
و (مراغه) ممالك مشهوره‌سندندر . بو قطعه‌ده مقدما درت ملیونه
قریب اهالی موجود ایکن اوغرادیغی انقلابات مناسبتیله شمدی بر بچق
ملیونه تنزل ایلدی .
بوراده پك اعلا تیمور و باقر و طوز معدنلری واردر وقابلیجه‌لری
خسته‌لره نافعدر . ازربایجان (۷۰٦ م و ۸۸ ه) تاریخنده یداسلامیانه
کچدی وسلطان (مراد ثالث) وسلطان (سلیم اول) حضراتی طرفندن
کرکی کبی تهدید و بر قاچ دفعه استیلا اولندیسه‌ده محافظه‌سی ممکن اوله‌مدی .
(آزربایجان) نامنك (آتروپاتان) نك غلطی اولدیغنی وآتروپاتان اسکندر
رومی جنرالرندن بر شخص ایدوکنی بعض مورخین بیان ایده‌یور .

Նկար 12.«Ադրբեջան» պատմական և աշխարհագրական հասկացության սահմանումը՝ ըստ Ահմեդ Ռիֆաթ էֆենդիի հեղինակած «Պատմաաշխարհագրական բառագրքի»

Բառագրքի չորրորդ հատորում (Ստամբուլ, 1883) «Շիրվան» բառի դիմաց հանդիպում է հետևյալը (տես Նկար 13). «Վիլայեթ, որ գտնվում է ասիական Ռուսաստանում, Խազեր (Կասպից) ծովի արևմտյան ափում: Այս վիլայեթը հյուսիսից սահմանվում է Դաղստանով, հարավից՝ Էրիվանով (Երևան) և Կուռ գետով, արևմուտքից՝ Վրաստանով և արևելքից՝ Խազեր ծովով...»[11]:



— ۱٤۰ —

کورجستان شرقاً بحر خزر ایله تحدید اولنور . کرسی اداره‌سی قفقاسیه
اتکنده کائن (شماخی) شهری اولوب یوز یکرمی یك نفوسی جامعدر ولایت
مذکوره‌هر بر یك مراکز اداره‌لری قدیم شماخی . باقو . توشی . شوش
شهرلری اولمق اوزره درت ایالته تقسیم ایدیلور هواسی کوزل واراضیسی
غایت عارضه‌لی ومعموردر .

« شیروان » — آسیای روسیه‌ده وبحر خزرك جهت غربیسنده
بر ولایتدر اشبو ولایت شمالاً طاغستان جنوباً اریوان وقور نهرلری غرباً

Նկար 13. «Շիրվան» պատմական և աշխարհագրական հասկացության սահմանումը՝ըստ Ահմեդ Ռիֆաթ էֆենդիի հեղինակած «Պատմաաշխարհագրական բառագրքի»

Գրող, փիլիսոփա և բառարանների ու հանրագիտարանների հեղինակ Շեմսեդդին Սամի Ֆերաշերին ծնվել է 1850 թ. Ալբանիայի Յանինա գավառի Ֆերաշեր քաղաքում: Նախնական կրթությունը ստացել է Յանինայի գիմնազիայում, սերտել է ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, պարսկերեն և արաբերեն: Երիտասարդ տարիքից աչքի է ընկել գրական ընդունակությամբ: 1872 թ. տեղափոխվել է Ստամբուլ և ընդունվել Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարություն՝ որպես գրաքննչական գրա-

11 Նույնը, հատ. Դ, Ստամբուլ, 1883, էջ 139-140:
(احمد رفعت افندی، «لغات تاریخیه و جغرافیه»، جلد 4، 1883 میلادی (1300 هجری قمری)، استانبول، صفحات 140-139)

սենյակի քարտուղար: Ստամբուլում խմբագրել է «Թերջուման-ի-շարղ», իսկ Տրիպոլիում՝ «Թրաբլոս գրափ» թերթերը: Աբդուլ Համիդի հրամանով նշանակվել է բանակի հսկիչ կոմիտեի անդամ և պաշտոնավարել մինչև իր վախճանը՝ 1904 թվականը: Հեղինակ է 42 աշխատությունների, որոնցից մատնանշելի են «Անունների բառարան» (Ղամուս-էլ-էլամ/ قاموس الاعلام) և «Թուրքերենի բառարան» (Ղամուս-ի-թուրքի/ قاموس تركى) հատորյակները, որոնք ունեն գիտական նշանակություն և Օսմանյան կայսրության պատմության հանրագիտարանային բնույթի կարևոր աղբյուրներից են համարվում[12]:

Շեմսեդդին Սամի Ֆերաշերիի հեղինական «Անունների բառարանի» առաջին հատորը տպագրվել է 1889 թ., Բաբը Ալիում՝ Ստամբուլ (տես Նկար 14):


قاموس الاعلام

تاريخ وجغرافيا لغاتى وتعبير اصحله كافهٔ اسماء خاصه‌يى جامعدر

(تاريخه متعلق : كافهٔ اقوام واصله انبياء، خلفاء، صحابه، تابعين، رجال حديث، ملوك، امرا، وزرا، حكام، حكماء، علماء، فقهاء، اولياء، مشايخ، ادبا، شعرا، اطبا، مورخين، سياحين، اصحاب هنر، اشخاص موهومهٔ اساطير والحاصل شرق وغربه وازمنهٔ قديمه وجديدمه عائد كافهٔ مشاهيرك اسملريى، ترجمهٔ حالريى وآثار وتأليفاتنك تعريفى؛ جغرافياية متعلق دخى : كره ارضك منقسم بولنديغى قطعات وممالك ودولك، وكايدلر، يوغازلر، آطه‌لر، طاغلر، نهرلر، كوللر، اوودملرك، وكرك اسكى كرك يكى قصبه‌لرله بيوجك قريه‌لرك اسملريى، موقعلريى، طول وعرضلريى احوال تاريخيه وطبيعيه‌لريى، اهاليلرينك مقداريى، باشلجه محصولات واخراجاتلريى والحاصل تفصيلات تمكنه‌يى شامل وحروف هجا صره‌سيله مرتبدر.)

محررى : ش. سامى صاحب وطابعى : مهران

DICTIONNAIRE UNIVERSEL
D'HISTOIRE ET DE GÉOGRAPHIE

PAR
CH. SAMY-BEY FRASCHERY

EDITEUR MIHRAN

TOME PREMIER

CONSTANTINOPLE
Imprimerie MIHRAN — Rue de la S. Porte N. 5-7
1889

برنجى جلد

معارف نظارت جليله‌سى طرفندن تقدير وتحسين اولنه‌رق طبع اولنمشدر.

استانبول
(مهران) مطبعه‌سى — باب عالى جاده‌سنده نومرو ۷
۱۳۰۶

Նկար 14. Շեմսեդդին Սամի Ֆերաշերիի հեղինական «Անունների բառարանի» տիտղոսագիրը

Սույն բառարանի առաջին հատորում Ադրբեջան (اذربايجان) բառի դիմաց առկա է հետևյալ բացատրությունը (տես Նկար 15-ը). «Այս վիլայեթը գտնվում է Իրանի հյուսիս արևմուտքում, որն արևելքից սահմանվում է

12 Տես fa.wikipedia.org/wiki/

Գիլան վիլայեթով և Խազեր ծովեզրով, հյուսիսից՝ Ռուսաստանի սահման Արասով (Արաքս) և արևմուտքից՝ Օսմանիայի սահմանով, այսինքն՝ Բայեզիդի սանջակով ու Քրդստանով, հարավից՝ իրանական Քրդստանով և Իրաքով...»[13]: Հատկանշականն այն է, որ Շեմսեդդին Սամի Ֆերաշերին Ադրբեջանի բացատրության մեջ, ի թիվս լատինական, հունական և պարսկական աղբյուրների, ակնարկում է նաև հայկական պատմագիտական աղբյուրները՝ մեջբերելով «Ատրպատական» անվանաձևը[14]:

آذر ٦٧

یکان) ویا (آذر آبادکان) اولوب، بو تعبیر « حافظ نار » معناسنه کلکله، ابتدا بر بیوك آتشکده‌یه، وبعده تعمیم صورتیله بو آتشکده‌نك بولنش اولدیغی تبریز شهرینه ونهایت مرکزی تبریز اولان بوولایته علم اولمشدر. دیکر بر روایت واحتماله کوره‌ده، (آذربایجان) اسمی (آتروپاتنه) دن محرف اولوب، بوده اسکندرك سردارلرندن (آتروپاتوس) ه نسبتله حاصل اولمش بر اسمدر؛ چونکه مرقوم آتروپاتوس اسکندرك وفاتنده اوراده اعلان استقلال ایدرك، (آتروپاتنه) اسمیله کوچك بر دولت تشکیل ایتمشیدی. واقعا، روما دولتی زمانندن قالمش اولان لاتین ویونان تاریخلرنده آذربایجانك اسمی (آتروپاتنه) دیه ذکر اولندیغی کبی، بعض پهلوی اثرلرده دخی (آتروپاتکان) صورتنده ایسه‌ده، تواریخ فارسیه‌ده وارمنی تاریخلرنده (آذربادکان) ویا (آذربایکان) صورتنده محرر اولدیغندن، برنجی احتمال دها قوی کوریلیور. سام ابن نوحك نسلندن (آذر)

آذربایجان { ایرانك شمال غربی حدودنده واقع بر ولایتیدر، که شرقاً گیلان ولایتی وروسیه‌نك النده بولنان بحر خزر ساحلیله، شمالاً روسیه حدودینی آیران (آراس) نهریله، غرباً حدود عثمانیه ایله یعنی بایزید سنجاغی وکردستانله، جنوباً دخی ایرانك النده بولنان کردستانله وعراق عجمی ایله محدود ومحاطدر. اصل اسم قدیمی (آذربا-

Նկար 15.«Ադրբեջան» պատմական և աշխարհագրական հասկացության սահմանումը՝ ըստ Շեմսեդդին Սամի Ֆերաշերիի հեղինակած «Անունների բառարանի»

Բառարանի չորրորդ հատորում (Ստամբուլ, 1894) «Շերվան» բառի դիմաց առկա է հետևյալ բացատրությունը (տես Նկար 16). «}Շերվան կամ Շիրվան{ կովկասյան երկրամաս, որը գտնվում է Խազեր ծովի արևմտյան ափի և կովկասյան լեռնաշղթայի արանքում ընկած տարածքում: Նրա ներքևում է Կուր գետը՝ մինչև ծով, իսկ կենտրոնում՝ Շամախի գավառը... »[15]:

13 **Շեմսեդդին Սամի Ֆերաշերի,** Անունների բառարան, հատ. Ա, Ստամբուլ, 1889, էջ 67: (شمس الدین سامی فراشری، «قاموس العلام»، جلد 1، 1889 میلادی (1306 هجری قمری)، استانبول، صفحه 67): Այստեղ պետք է նշել, որ 1880-ականների սկզբներին, սուլթան Համիդի հատուկ կարգադրությամբ, օսմանյան հրատարակություններում պաշտոնապես արգելվել է «Հայաստան» հասկացության նշումը: Այս կարգադրության արդյունքում, «Հայաստանի» փոխարեն հաճախ օգտագործվել են «Քրդստանը» կամ համապատասխան վիլայեթների անունները:
14 Նույն տեղում:
15 **Շեմսեդդին Սամի Ֆերաշերի**, Անունների բառարան, հատ. Դ, Ստամբուլ, 1894, էջ 2853: (شمس الدین سامی فراشری، «قاموس العلام»، جلد 4، 1894 میلادی (1311 هجری قمری)، استانبول، صفحه 2853)



Նկար 16. «Շերվան» պատմական և աշխարհագրական հասկացության սահմանումը, ըստ Շեմսեդդին Սամի Ֆերաշերիի հեղինակած «Անունների բառարանի»

3. Օսմանյան կայսրությունում օգտագործվող դասագրքերը

Պատմաբան և քաղաքական գործիչ Աբդուլռահման Շերեֆ բեկը հեղինակ է բազմաթիվ աշխատությունների, որոնցից հարկ է նշել «Օսմանյան պետության պատմություն» (Թարիխ-ի-դեվլեթի-ի-Օսմանիյե/تاریخ دولتی عثمانیه), «Իսլամական պետությունների պատմություն» (Թարիխ-ի-դովել-ի-իսլամիյե/تاریخ دول اسلامیه), «Ժամանակակից պատմություն» (Թարիխ-ի-ասր-ի-հազիր/تاریخ عصر حاضر), «Ժամանակակից պատերազմի ակունքներ» (Մանշա-ի-ջենգ-ի-հազիր/منشاء جنگ حاضر), «Ընդհանուր աշխարհագրություն» (Ջողրաֆիա-ի-օմումի/جغرافیای عمومی) դասագրքային հատորները, որոնք դասվում են օսմանյան պաշտոնական սկզբնաղբյուրների շարքին[16]: Ծնվել է 1853 թ. Ստամբուլում: Եղել է Ստամբուլի Գալաթասարայի և հանրահռչակ Մելեքիե միջնակարգ դպրոցների, ինչպես նաև ֆրանսերեն-թուրքերեն երկլեզու մի քանի դպրոցների հիմնադիր-տնօրենը: Երիտթուրքական հեղաշրջումից (Հուրիյեթից) հետո՝ 1908 թ., ընտրվել է ծերակույտի անդամ: 1909 թ. նշանակվել է **կայսրության պաշտոնական պատմագիր** և վարել է այդ պաշտոնը մինչև 1922 թ.: 1910 թ. հիմնել է Օսմանյան պատմության հիմնարկը: Պետական պաշտոնավարությանն առընթեր մասնակցել է ակադեմիական աշխատանքների, հեղինակ է մի շարք դասագրքերի: Հանրապետության հռչակումից հետո՝ 1923 թ., ընտրվել է Թուրքիայի Մեջլիսի անդամ: Վախճանվել է 1925 թ.:

16 Տես http://tr.wikipedia.org/wiki , նաև՝ http://ca.wikipedia.org/wiki

Նկար 17. Աբդուլռահման Շերեֆ բեկ

Աբդուլռահման Շերեֆ բեկի հեղինակած «Ընդհանուր աշխարհագրություն» դասագրքի առաջին հատորը տպագրվել է 1906 թ., Բաբը Ալիում՝ Ստամբուլ (տե՛ս Նկար 18):

جغرافیای عمومی

عبدالرحمن شرف

مدیر مکتب سلطانی

جلد

۱

طبع رابع

اشبو مهر ایله مهرلنمش نسخه‌لره ساخته نظریله باقیله‌جقدر

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

استانبول

(قره‌بت) مطبعه‌سی — باب عالی جاده‌سنده

۱۳۲۳

LIBRARY
NOV 16 1977
UNIVERSITY OF TORONTO

Նկար 18. Աբդուլռահման Շերեֆ բեկի հեղինակած «Ընդհանուր աշխարհագրություն» դասագրքի տիտղոսագիրը

Սույն դասագրքի առաջին հատորի «Կովկաս» բաժնում, ուր ընդարձակ բացատրություններ են տրվում կովկասյան նահանգների մասին (տե՛ս Նկար 19), ի թիվս այլոց, «Շիրվան»-ի մասին ասված է. «... այս նահանգի կենտրոնը Բաքուն է և նրա նշանակալի քաղաքներն են Շաքին և Շամախին: Շամախին երեք-չորս տասնյակ տարի առաջ ամբողջապես ավերվել է երկրաշարժի պատճառով...»[17]:


دردنجیسی (شیروان) ایالتیدر که مقری (باکو) شهری اولوب
(شکی) و (شماخی) شهرلری بلاد مشهوره‌سندندر . شماخی اوچ
درت سنه اول برزلزله‌ده کلیاً خراب اولمشیدی . باکو شهری
(۱۱۲۰۰۰ نفوس) بحر خزر ساحلنده مستحکم و تجارتکاه
براسکله اولوب بحر خزرده ایشلیان واپور قومپانیاسنك مرکزیدر
نفت و پترول منبعلریله کسب اشتهار ایلمشدر .

Նկար 19. «Շերվանի» մասին բացատրությունն ըստ Աբդուլռահման Շերեֆ բեկի հեղինակած «Ընդհանուր աշխարհագրություն» դասագրքի

Պետք է նշել, որ Շամախի քաղաքը չորս անգամ՝ 1191 թ., 1667 թ., 1859 թ., 1872 թ. և 1902 թ. ավերվել է երկրաշարժից: Աբդուլռահման Շերեֆ բեկի նշումը կամ առնչվում է 1859 թ. մեծ երկրաշարժին, երբ Շամախի քաղաքն ունեցավ մարդկային և նյութական խոշոր կորուստներ, որոնց հետևանքով նահանգի կենտրոնը 1860 թ. Շամախիից փոխադրվեց Բաքու,[18] կամ էլ՝ 1872-ին:

Եզրակացություն

Ներկայացված քարտեզները, փաստերը և փաստաթղթերը վկայում են, որ Օսմանյան կայսրության պաշտոնական քարտեզներում ու հանրագիտարանային նշանակության աղբյուրներում, 16-րդ դարից սկսած մինչև 1918 թվականի մայիսը, այսպես կոչված՝ «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության» հիմնումը, նրա աշխարհագրական դիրքն անվանվել է «Շիրվան» կամ «Շերվան», որը հարավից սահմանափակվել է Կուր գետով, իսկ Ադրբեջանը համարվել է Իրանի երկրամաս:

Հաշվի առնելով սույն քարտեզների, փաստերի և փաստաթղթերի թուրքական-պաշտոնական բնույթը, ուստիև՝ 1918-ին սեփական բանակի սվիններով ստեղծված պետության պատմությունը կեղծելու հարցում որևէ շահագրգռության իսպառ բացակայությունը, միանշանակ կերպով կարելի է եզրակացնել, որ ներկայիս «Ադրբեջանի Հանրապետություն» հասկացությունը շինծու աշխարհագրական և քաղաքական կատեգորիա է:

17 **Աբդուլռահման Շերեֆ բեգ**, Ընդհանուր աշխարհագրություն, հատ. Ա, Ստամբուլ, 1907, էջ 81: (عبدالرحمن شرف بیگ، «جغرافیای عمومی»، جلد اول، 1907 میلادی (1323 هجری قمری)، استانبول، صفحه 81.)

18 Տե՛ս http://en.wikipedia.org/wiki/Shamakhi_Rayon

Summary

GEOGRAPHICAL DEFINITIONS OF "AZERBAIJAN"

In Turkish ottoman encyclopedic and academic documents and maps

Karen H. Khanlarian (Tehran)

Historical evidences prove that the authorities of "Ittihad ve taraki" party (Union and Progress) of young Turks in Ottoman Turkey had a distinctive role in the nomination of so called "Azerbaijan" state, established in May 1918. It was by their order that the "Musavat" party named this newly emerged statehood as "Azerbaijan" on the territories where once were existing as "Albania", "Shirvan" or "Shervan". The authorities of "Ittihad ve Taraki" along with the "Musavatists" strived for creating a favorable political ground to annex the Azerbaijan province of Iran to this newly created state.

Has any historical land named "Azerbaijan" ever existed on the northern bank of Arax River? Does this falsification have any significant relevance to the historical lands of Azerbaijan of Iran? The panturkist historians have implemented extensive researches in this regard and traditionally have created some criteria based on which they boldly reject the authenticity of the Iranian, Russian, European and Armenian historical sources, calling them "fake", "false" or "with bias

The main purpose of this paper is to reveal the geographical concept of "Azerbaijan" based on the Turkish ottoman encyclopedic and academic documents and maps.

The facts mentioned in this paper prove that based on the official maps and encyclopedic and academic documents, published materials and textbooks in Turkish ottoman empire, the geographical territories where the so called "Democratic Republic of Azerbaijan" state was created were existing as "Shirvan" or "Shervan" starting from the 16th century until May 1918. And Azerbaijan (Aturpatakan or Atropatena) was part of territory of Iran, as an Iranian province on the southern bank of Arax River

Hence, without doubt we can conclude that the concept of "Azerbaijan Republic" is a geographically and politically fake phenomenon.